ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կապի ոլորտում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ձգտելով զարգացնել երկկողմ շահավետ հարաբերությունները կապի ասպարեզում, ապահովել էլեկտրական և փոստային կապի անխափան գործունեությունը երկու պետություններում, ինչպես նաև տվյալ ոլորտում իրավական կանոնավորումը կատարարելագործելու նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կապի ասպարեզում իրենց հարաբերությունները կկառուցեն համաձայն միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի և սկզբունքների, Համաշխարհային փոստային միության ակտերի դրույթների և էլեկտրակապի միջազգային միության երաշխավորությունների հիման վրա: Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն Համաձայնագրով, որոնց անդամ են հանդիսանում երկու Կողմերն էլ, կլուծվեն Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն:

Հոդված 2

Կողմերը իրենց տարածքներում ապահովում են բոլոր փոստային առաքումների անխափան ընդունումը, մշակումը, ուղարկումը և հանձնումը, ինչպես նաև մատուցում են երկկողմ ծառայություններ՝ սահմանված կարգով գրանցված պարբերական մամուլի տարածման համար:

Կողմերի միջև փոստային առաքումների փոխանակման և դրամային առկա քանակության փոխհաշվարկների իրականացման կարգը որոշում են հատուկ համաձայնագրերով:

Հոդված 3

Կողմերը երաշխավորում են բոլոր տեսակների էլեկտրակապի, փոստային առաքումների և հատուկ կապի, հեռուստատեսային և ռադիոհաղորդումների տարանցումը սեփական տարածքներով:

Հոդված 4

Կողմերը միմյանց կցուցաբերեն տեխնիկական և կազմակերպական օգնություն՝ իրենց տարածքներում մյուս Կողմի ազգային ռադիոծրագրերի և հեռուստատեսային ծրագրերի հաղորդման և պարբերական հրատարակչությունների՝ բաժանորդագրմամբ և մանրածախ առևտրի միջոցով տարածման գործում՝ Կողմերի կամ նրանց համապատասխան գերատեսչությունների միջև համաձայնագրերով սահմանված քանակով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրից բխող հաշվարկներն ու վճարումները կկատարվեն վճարման օրը՝ Կողմերի միջև գոյություն ունեցող համաձայնագրերին համապատասխան:

Հոդված 6

Կողմերը կապի կազմակերպություններում միջպետական հաղորդագրությունների և տեղեկությունների հաղորդման տեխնոլոգիական գործընթացներում օգտագործում են մեկ ընդհանուր հաշվարկահաշվետվային ժամանակ, որը որոշվում է Կողմերի՝ կապի վարչակազմերի միջև համաձայնագրով:

Հոդված 7

Կողմերը երկկողմ շահավետ պայմաններով կազմակերպում և իրականացնում են՝

միջպետական էլեկտրակապի ցանցերի շահագործումն ու օպերատիվ- տեխնիկական ղեկավարումը՝ համաձայնեցված ալգորիթմերով և նորմատիվ ակտերով,

էլեկտրական և փոստային կապի միջոցների համակարգում գիտահետազոտական և նախագծակոնստրուկտորական համատեղ աշխատանքներ, համագործակցում էլեկտրակապի և փոստի՝ ցույց տրվող ծառայությունների որակի բարելավման, տեխնիկական շահագործման հարցերում, փորձի և տեղեկության փոխանակություն վերը նշված հարցերում:

Հոդված 8

Կողմերը արտակարգ իրավիճակի պայմաններում փոխադարձաբար աջակցություն են ցուցաբերում կապի ցանցերով ու միջոցներով հաղորդագրությունների առաջնային հաղորդման մեջ:

Կողմերը միջպետական կապի գծերի վթարների վերացման ժամանակ կցուցաբերեն փոխադարձ օգնություն:

Վերականգնման աշխատանքներ իրականացնելիս փոխհամագործակցության կարգը մշակվում և համաձայնեցվում է Կողմերի՝ կապի վարչակազմերի կողմից:

Հոդված 9

Կողմերը բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի մեկնաբանման և իրականացման ընթացքում, կլուծեն բանակցությունների ճանապարհով:

Սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունները կատարելիս առաջացած տարաձայնությունները ուսումնասիրվում են հատուկ ստեղծված ժամանակավոր միջկառավարական հանձնաժողովի կողմից՝ կազմված Կողմերի հավասար քանակ ունեցող անդամներից:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի իրավունքներն և պարտականությունները, որոնք բխում են նրանց կնքած այլ պայմանագրերից:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և ուժի մեջ կմնա մինչև 90 օրվա լրանալը այն օրից, երբ Կողմերից մեկը մյուս Կողմին գրավոր կհաղորդի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու սեփական նկատառումների մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի հուլիսի 1-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 1-ից: